

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման և դրանցից բարձր բերք ստանալու համար վճռորոշ նշանակություն ունի ոչ միայն ագրոտեխնիկական միջոցառումների կատարումը, այլև նրանց պաշտպանությունը բույսերի վնասատուներից ու հիվանդություններից:

Մշակաբույսերը վնասվում են բազմաթիվ վնասատուների ու հիվանդությունների հարուցիչների կողմից, որոնցից են՝ միջատները, տզերը, բազմատանիները, կողինջները, սնկային, բակտերիալ, վիրուսային և նեմատոդային բնույթի հիվանդություններ առաջացնող հարուցիչները և այլն: Դրանց շատ տեսակներ բարենպաստ պայմաններում բազմանում են զանգվածաբար և զգալի վնաս են պատճառում մշակաբույսերին՝ թուլացնում են աճեցողությունը՝ հասցնելով նրանց չորացման, վնասում ծաղիկները, սերմերը, պտուղները, պակասեցնում բերքատվությունը, իջեցնում բերքի որակը: Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի մեթոդներից դեռևս առաջնահերթ տեղ է գրավում քիմիական մեթոդը, որը ունի բարձր արդյունավետություն: Թունաքիմիկատների ճիշտ տեսականու ընտրությունը, չափաքանակների և ժամկետների ճիշտ պահպանությունը խիստ կարևոր նշանակություն ունի պայքարի միջոցառումների արդյունավետության բարձրացման և շրջակա միջավայրի ախտոտումից զերծ պահելու գործում:

Գրքույկի 1-ին բաժնում հակիրճ տրվում է վնասատուների և հիվանդությունների դեմ արդյունավետ պայքարի միջոցառումների համակարգը ըստ մշակաբույսերի և նրանց զարգացման փուլերի: 2-րդ բաժնում տրված է պեստիցիդների (բույսերի պաշտպանության համար քիմիական նյութեր) տեսակները, նրանց բնութագրերը, աշխատանքային հեղուկի պատրաստման խտությունները և սպասման ժամկետները:

3-րդ բաժնում տրված է պայքարի քիմիական միջոցների պահպանման, տեղափոխման և անվտանգ կիրառման միջոցառումները:

Գրքույկում նշված բոլոր պեստիցիդները (ագրոքիմիկատները) գրանցված են “ՀՀ Բ/Պ քիմիական և կենսաբանական միջոցների միջգերատեսչական հանձնաժողովի” կողմից և թույլատրվում են օգտագործել Հայաստանի Հանրապետությունում:

Սույն գրքույկի նպատակն է օգնել գյուղատնտեսական կրթություն չունեցող հողագործներին և սկսնակ ֆերմերներին ճիշտ և որակով կազմակերպել պայքարի աշխատանքները: Գրքույկը գրված է պարզ և մատչելի ընթերցողների լայն շրջանների համար:

## ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻ

### Նախագգուշական և Ագրոտեխնիկական Միջոցառումներ

Խաղողի այգին պետք է հիմնել մաքրասորտ, առողջ և ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների վրա պատվաստված արմատակալներով: Տնկանյութի տնկման ժամանակ բակտերիալ քաղցկեղով վարակված տնկիները հայտնաբերելիս խոտանել և տեղում այրել, իսկ առողջ տնկիները տնկելուց առաջ ախտահանել **Ֆունգուրան – ՕՒ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (10լ. ջրին 20գր) լուծույթով 10-15 րոպե տևողությամբ ընկղմելով լուծույթի մեջ: Ցածր բերքատու, թույլ աճ ունեցող, նոսր և բակտերիալ քաղցկեղով վարակված այգիները արմատախիլ անել ու ազատված տարածությունները 3-4 տարի զբաղեցնել հացազգի կուլտուրաներով:

Աշնանը և գարնանը կիրառել համակցված հանքային պարարտացում (ազոտական, ֆոսֆորական և կալիումական): Միակողմանի ազոտական պարարտացումը նպաստում է մի շարք հիվանդությունների և վնասատուների տարածմանը:

Պայքարի աշխատանքները որակով կատարելու և հիվանդությունների ու վնասատուների քանակը նվազեցնելու համար հարկավոր է ժամանակին և որակով կատարել չոր կապը և կանաչ կապը: Առաջին կանաչ կապը կատարել, երբ շիվերը անցնում են 2-րդ լարից, երկրորդը՝ ծաղկումից հետո, երրորդը՝ հունիսի 3-րդ տասնօրյակին: Նույն նպատակով հարկավոր է նաև որակով և ժամանակին կատարել կանաչ հատումները: Առաջին կանաչ հատումը կատարել, երբ շիվերի վրա երևում են ծաղկաբույլերը, երկրորդը՝ ծաղկումը ավարտելուց մեկ շաբաթ հետո: Հարկավոր է այգիները զերծ պահել մոլախոտերից:

Միլդիու (չոռ), օիդիում (սև), փտում և բակտերիալ քաղցկեղ հիվանդություններից խուսափելու համար շատ կարևոր է նաև ճիշտ կատարել ջրումը և պահպանել ջրման նորմաները: Պետք է խուսափել ջուրը լճացած վիճակում երկար ժամանակ թողնելուց:

## ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Խաղողի առաջին սրսկման աշխատանքները սնկային հիվանդությունների դեմ (միլդիու, օիդիում և այլն) կատարել, երբ վազի շիվերի վրա առաջացել են 3-4 տերևներ: 2-րդ, 3-րդ, 4-րդ և պահանջվող հաջորդ սրսկումները կատարել 20-25 օր ընդմիջումներով 1 հեկտարին ծախսելով 1000-1200լ աշխատանքային հեղուկ: Հաճախակի անձրևների դեպքում սրսկման միջև եղած ընդմիջումները կրճատել հասցնելով 10-15 օրվա:

Միլդիուի (չոռ) դեմ սրսկումները կատարել **Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ.** կամ **Մալոն 80 Թ.Փ.**, կամ **Պրաքսիս 70 Թ.Փ.** պատրաստուկների 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթներից որևէ մեկով: Ուժեղ վարակված այգիները սրսկել **Մալոն Մ 4/ 64 Թ.Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) կամ որ ավելի հեռանկարային է **Սֆինքս էքստրա 113 Ջ. Դ. Հ.** պատրաստուկի 0,15-0,17%-ոց (100լ. ջրին 150-170գր) լուծույթներից որևէ մեկով:

**Օիդիումի** (սև) դեմ նախքան ծաղկելը սրսկել կոլոիդ ծծումբի կամ **Սուլֆուր Ջ. Լ. Հ.** պատրաստուկի 0,4-0,5% (100լ. ջրին 400-500գր) լուծույթով 2 անգամ, իսկ ծաղկումից հետո 2-3 անգամ բուժել **Օրիսուլ Ջ.Դ.Հ.** պատրաստուկի 0,15-0,2%-ոց (100լ. ջրին 150-200գր) լուծույթով: Օիդիումով ուժեղ վարակված այգիները շատ արդյունավետ է բուժել **Ռուբիգան 12 Խ. Է.** պատրաստուկի 0,04-0,05%-ոց (100լ. ջրին 40-50մլ) լուծույթով:

Խաղողի վազի մոխրագույն փտում սնկային հիվանդության դեմ բուժել **Բոտրան 75 Թ. Փ.** պատրաստուկի 0,1-0,15%-ոց (100լ. ջրին 100-150գր) լուծույթով:

Սնկային հիվանդությունների դեմ բուժումները պետք է կատարել նախագուշական՝ մինչև բույսերի վարակվելը, վեգետացիայի ընթացքում սրսկելով 6-ից 12 անգամ՝ կախված անձրևների հաճախականությունից (թարմաները սրսկել 5-8 անգամ): Հիվանդությունների վարակի բռնկումների ժամանակ բուժանյութի լուծույթի կոնցենտրացիան մեծացնել հասցնելով թույլատրելի ամենաբարձր մակարդակին: Ավելի արդյունավետ է բուժանյութերը հերթագայել մեկը մյուսով:

Խաղողի ողկուզակերի (որդի) դեմ պայքարի աշխատանքները կատարել այգիներում տեղադրված սեռական թակարդները ընկած թիթեռների թռիչքի ինտենսիվության հիման վրա: Բազմամյա տարիների դիտումների համաձայն, Արարատյան հարթավայրում ողկուզակերի առաջին սերնդի դեմ պայքարն անհրաժեշտ է սկսել մայիսի 20-25-ը, երկրորդ սերնդի դեմ՝ հուլիսի 10-15-ը, երրորդ սերնդի դեմ՝ օգոստոսի 10-15-ը, իսկ նախալեռնային գոտում վերը նշված ժամկետներից 5-6 օր ուշ:

Խաղողի ողկուզակերի դեմ տարվող պայքարը միաժամանակ նպաստում է թրիպսի, ցիկադի, ալրավոր որդանի քանակի նվազեցմանը:

Խաղողի ողկուզակերի դեմ պայքարը կատարել հետևյալ պատրաստուկներից որևիցե մեկով՝ **Ազրոֆոս 48 Խ. Է.** կամ **Սալոս 35 Խ.Է.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200մլ) լուծույթով, կամ **Իմիդան 50 Թ.Փ.** պատրաստուկի 0,1%-ոց (100լ. ջրին 200գր), կամ **Ազրոֆոս Սուպեր 505 Խ. Է.** պատրաստուկի 0,15%-ոց (100լ. ջրին 150մլ) լուծույթով: Ավելի հեռանկարային է **Պիրինեքս Սուպեր 402 Խ. Է.** պատրաստուկի 0,06-0,08%-ոց (100լ. ջրին 60-80մլ) լուծույթով բուժում կատարելը, որը միաժամանակ պայքարում է ողկուզակերի, ալրավոր որդանի, ցիկադայի, թրիպսի և ոստայնատիզի դեմ: Խաղողի ուշահաս տեսակները, ողկուզակերի 4-րդ սերնդի դեմ կատարել ևս մեկ սրկում **Լեպիդոցիդի Թ. Փ.** պատրաստուկի 0,2-0,3%-ոց (100լ. ջրին 200-300գր) կամ **Բիտոքսիբացիլինի** պատրաստուկի 0,6-0,8%-ոց (100լ. ջրին 600-800գր) լուծույթներով:

Ցանկալի է սրկումների ժամանակ պատրաստուկները հերթագայել մեկը մյուսով, որպեսզի բացառվի միջատների հարմարողականության ձեռքբերումը: Խորհուրդ է տրվում ողկուզակերի դեմ սրկման ժամկետների սխալը բացառելու նպատակով տվյալ սերնդի դեմ կատարել երկու սրկում 6-8 օր ընդմիջումներով:

Այգու ոստայնատիզի դեմ առաջին սրկումը կատարել, երբ վազի շիվերի վրա առաջացել են 3-4 տերևներ, ապա 10-15օր ընդմիջումներով, սրկելով ևս 2 անգամ: Սրկել **Ազրոր 40 Խ. Է.** պատրաստուկի 0,15-0,2%-ոց (100լ. ջրին 150-200մլ) լուծույթով, իսկ ուժեղ վարակված այգիներում **Պիրինեքս Սուպեր 402 Խ. Է.** պատրաստուկի 0,08%-ոց (100լ. ջրին 80մլ) լուծույթով: Ավելի արդյունավետ է **Ղեմիտան 20 Խ. Է.** պատրաստուկի 0,05%-0,07%-ոց (100լ. ջրին 50-70մլ) լուծույթով բուժումը:

Սրկման ծախսերը փոքրացնելու նպատակով աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի համընկնի միջատների և սնկային հիվանդությունների պայքարի ժամկետները և կատարել միջատասպան և սնկասպան պատրաստուկների համատեղում մեկ սրկման ժամանակ (համակցված բուժում):

Խաղողի բուժումների ժամանակ խորհուրդ է տրվում բանվորական հեղուկին (պատրաստի լուծույթին) խառնել բիոլոգիական ակտիվ նյութ և աճման խթանիչ **Լիզոնզումատ կալիումական AM** տեսակը: Այդ նյութի 0,05%-ոց (100լ. ջրին 50գր) լուծույթով սրկում կատարելիս (վեգետացիայի ընթացքում 3-4 անգամ) մեծանում է բույսի դիմադրողականությունը անբարենպաստ պայմանների նկատմամբ, արագանում է աճի և հասունացման գործընթացը, մեծանում է ազրոքիմիկատի կաչողականությունը, և վերջապես նպաստում է բերքատվության և խաղողի որակական հատկանիշների բարձրացմանը:

## ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻ

### ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ և ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Աշնանը, բերքահավաքից հետո, ծառերի բները ու կմախքային թևերի հիմքային մասերը մաքրել չոր, կիսապոկ կեղևներից, ծառերի բները ու կմախքային ճյուղերի հիմքային մասերը սպիտակեցնել 20%-ոց կրակաթով (10լ. ջրին 2կգ չհանգած կիր) և թարմ գոմաղբի խառնուրդով (կեղևակերների, ոսկերգեզների, խնձորենու ապակեթիթեռի, կալիֆորնյան վահանակրի դեմ):

Վաղ գարնանը որակով կատարել էտի աշխատանքները, ծառերի սաղարթի բարձրությունը ձևավորել 4-5մ-ից ոչ բարձր: Միևնույն ժամանակ կտրել և այրել հիվանդ, չորացած, վնասատուների ձմեռային բներ և ձվակույտեր կրող ճյուղերը, փտած պտուղները, ինչպես նաև բնից ու արմատավզից դուրս եկող հոռաշիվերը: Գարնանը կրկնել բների սպիտակեցման աշխատանքները, ինչպես նկարագրված է վերևում: Կարելի է գոմաղբը փոխարինել **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (10լ. ջրին 20գր) լուծույթով: Այգու միջշարքային և միջբուսային տարածությունները զերծ պահել մոլախոտերից և այլ բուսականությունից: Ամռանը հաճախակի հավաքել ծառերի տակ թափված, վնասված ու հիվանդ պտուղները և ոչնչացնել (թաղել 50սմ խորությամբ):

### ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

#### Ծիրանենի

Գարնանը, մինչև բողբոջների ուռչելը, սալորենու, թուրանական և ակացիայի կեղծ վահանակիրների, ինչպես նաև ծակոտկեն բծավորության, մոնիլիոզների և սև բորբոսապատում հիվանդությունների դեմ կատարել համակցված բուժում սրսկելով **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,15-0,2%-ոց (100լ. ջրին 150-200գր) լուծույթով, այն համատեղելով **Ֆունգուրան-ՕԻ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,4%-ոց (100լ. ջրին 400գր) լուծույթի հետ:

Բողբոջների ուռչելու շրջանում ռեկուրվարիա վնասատուի և ծակոտկեն բծավորության դեմ կատարել համակցված բուժում՝ սրսկելով **Ագրոֆոս 48 Խ. Է.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200մլ) լուծույթով, այն համատեղելով **Ֆունգուրան-ՕԻ 50 Թ. Փ.** 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթի հետ: Պսակաթերթերի թափվելուց հետո պտղացեցի, եղեգի վիճի, շերտավոր պտղացեցի, ծակոտկեն բծավորության դեմ սրսկել **Ագրոֆոս Սուպեր 505 Խ. Է.** 0,1-0,15%-ոց (100լ. ջրին 100-150գր) լուծույթով: Այդ սրսկումը կրկնել ևս 1 անգամ 10-15օր հետո: Վերջին

բուժումը կատարել նախորդից 10-15 օր հետո **Սալոս 35 Խ. Է.** պատրաստուկի 0,15-0,2%-ոց (100լ. ջրին 150-200մլ) լուծույթով համատեղել **Սալլոն-Մ 4/46 Թ. Փ.** պատրաստուկի 0,25%-ոց (100լ. ջրին 150գր) լուծույթով:

Սալորենու կամ թուրանական վահանակրերի առկայության դեպքում երկրորդ սրսկումը այդ վնասատուների դեմ կատարել հուլիսի 10-20-ը ընկած շրջանում **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,15%-ոց (100լ. ջրին 150գր) լուծույթով:

Ցանկալի է կատարել բուժանյութերի հերթագայում: Վերջին սրսկման ժամանակ պաշտպանել տվյալ բուժանյութի սպասման ժամկետը (բերքահավաքից առաջ տվյալ բուժանյութի սրսկման թույլատրվող ժամկետը):

### Դեղծենի

Գարնանը, մինչև բողբոջների ուռչելը, սալորենու և գոտկավոր կեղծ վահանակրերի, մանուշակագույն և կալիֆորնիան վահանակրերի ինչպես նաև սնկային հիվանդությունների (զանգրոտության, ծակոտկեն բծավորության, մոնիլիալ այրվածքի, ցիտոսպորայի) դեմ կատարել համակցված բուժում համատեղելով **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,15-0,2%-ոց (100լ. ջրին 150-200գր) և **Ֆունգուրան- ՕԻ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,4%-ոց (100լ. ջրին 400գր) լուծույթները:

Բողբոջների ուռչելու շրջանում, զանգրոտության, ծակոտկեն բծավորության, մոնիլիալ այրվածքի, ցիտոսպորայի դեմ սրսկել **Ֆունգուրան- ՕԻ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթով: Պսակաթերթերի թափվելուց անմիջապես հետո, ապա 20-25օր ընդմիջումներով զանգրոտության, ծակոտկեն բծավորության, մոնիլիալ այրվածքի, ցիտոսպորայի (կեղծ ալրացող սնկային հիվանդություններ) դեմ դեղծենու այգին բուժել **Սալլոն 80 Թ. Փ.** կամ **Սալլոն- Մ 4/64 Թ. Փ.**, կամ **Պրակսիս 70 Թ. Փ.** պատրաստուկների 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթներից որևէ մեկով: Իսկական ալրացողի դեմ կատարել բուժում **Օրիսուլ Ջ. Դ. Հ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթով: Մոնիլիալ այրվածք, մոնիլիալ փտում, սև բորբոսապատում սնկային հիվանդությունների դեմ շատ արդյունավետ է **Բոտրան 75 Թ. Փ.** պատրաստուկի 1%-ոց (100լ. ջրին 100գր) լուծույթով բուժում կատարելը: Հաճախակի անձրևների դեպքում սրսկման միջև եղած ընդմիջումները կրճատել հասցնելով 10-15 օրվա:

Արևեյան պտղակերի դեմ, ԳԱՄԿ - երի կողմից առաջադրվող ժամկետներում (հունիսի 7-12 ընկած շրջանում) կատարել սրսկում **Ագրոֆոս 48 Խ. Է.** կամ **Սալոս 35 Խ. Է.** պատրաստուկների 0,2%-ոց (100լ. ջրին 200մլ) լուծույթներից որևէ մեկով: Միաժամանակ պտղակերի,

տերևալուորների և լվիճների դեմ պայքարելու համար սրկել **Ագրոֆոս Սուպեր 505 Խ. Է.** պատրաստուկի 0,15%-ոց (100լ. ջրին 150մլ) լուծույթով: Միաժամանակ պտղակերի, տերևալուորների, լվիճների և տզերի դեմ պայքարելու համար շատ արդյունավետ է **Պիրիմեքս Սուպեր 402 Խ. Է.** պատրաստուկի 0,1%-ոց (100լ. ջրին 100մլ) լուծույթով բուժումը, որը տալիս է 95% արդյունք:

Պտղակերի դեմ հետագա սրկումները կատարել 15 օր ընդմիջումներով 4-6 անգամ 1 հեկտարին ծախսելով 1000-1300լ աշխատանքային հեղուկ:

Լվիճների դեմ պայքարը կազմակերպել ոչ ուշ, քան, երբ վարակված է դեղձանոցի 5%-ը: Սալորենու և գոտկավոր կեղծ վահանակրերի, մանուշակագույն և կալիֆորնիական վահանակրերի դեմ սրկել թափառող թրոուռների դեմ դուրս գալու և ճյուղերի վրա լրիվ ամրանալուց հետո (Հունիսի 20-ից հուլիսի 15): Այդ վնասատուի դեմ շատ արդյունավետ է **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,1%-ոց (100լ. ջրին 100գր) լուծույթով բուժումը:

Աշնանը, տերևաթափի նախօրյակին տնկարնը անհրաժեշտ է սրկել **Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,4%-ոց (100լ. ջրին 400գր) լուծույթով:

Զմռանալ պաշտպանել պատրաստուկների սպասման ժամկետները (բերքահավաքից առաջ տվյալ բուժանյութի սրկման թույլատրվող ժամկետը): Ցանկալի է պատրաստուկները հերթագայել մեկը մյուսով, որպեսզի բացառվի միջատների հարմարողականության ձեռքբերումը:

## ՍԱԼՈՐԵՆԻ ԵՎ ՇԼՈՐԵՆԻ

Գարնանը, մինչև բողբոջների ուռչելուը, սալորենու և գոտկավոր կեղծ վահանակրերի, մանուշակագույն և կալիֆորնիան վահանակրերի դեմ, ինչպես նաև սնկային հիվանդությունների (ծակոտկեն բժավորության, մոնիլիալ այրվածքի ցիտոսպորի) դեմ կատարել համակցված բուժում համատեղելով **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,15-0,2%-ոց (100լ. ջրին 150-200գր) և **Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,4%-ոց (100լ. ջրին 400գր) լուծույթները:

Բողբոջների ուռչելու շրջանում, ծակոտկեն բժավորության, մոնիլիալ այրվածքի դեմ սրկել **Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթով:

Պսակաթերթերի 90%-ը թափվելուց հետո սալորենու դեղին սղոցողի և շիվագալատիզի դեմ սրկել **Ագրո 40 Խ. Է.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200մլ) լուծույթով և կրկնել 10 օր հետո: Պսակաթերթերը թափվելուց 15 օր հետո, ապա 15 օր ընդմիջումներով սալորենու պտղակերի դեմ սրկել **Ագրոֆոս 48 Խ. Է.** կամ **Սալոս 35 Խ. Է.** պատրաստուկների 0,2%-ոց (100լ.

ջրին 200մլ) լուծույթներից որևէ մեկով, կրկնելով 2-3 անգամ մեկ հեկտարին ծախսելով 1000-1200լ աշխատանքային հեղուկ: 5% և ավելի լվիճներով վարակվածության դեպքում սրսկել **Ագրոֆոս Սուլֆեր 505 խ. է.** պատրաստուկի 0,15%-ոց (100լ. ջրին 150մլ) կամ **Պիրիմեքս Սուլֆեր 402 խ. է.** կամ **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկների 0,1%-ոց (100լ. ջրին 150մլ) լուծույթներից որևէ մեկով: Աշնանը, տերևաթափի նախօրյակին տնկարկները անհրաժեշտ է սրսկել **Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,4%-ոց (100լ. ջրին 400գր) լուծույթով:

### **ԲԱԼԵՆԻ ԵՎ ԿԵՌԱՍԵՆԻ**

Գարնանը, մինչև բողբոջների ուռչելը սնկային հիվանդությունների (ծակոտկեն բժավորություն, մոնիլիալ այրվածք և այլն) դեմ սրսկել **Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,4%-ոց (100լ. ջրին 400գր) լուծույթով: Բողբոջները ուռչելու շրջանում նույն հիվանդությունների դեմ սրսկել **Մալլոն –Մ 4/64 Թ. Փ.**, կամ **Պրակսիս 70 Թ. Փ.** պատրաստուկներից որևէ մեկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթով այն կրկնելով նաև ծաղկաթափից հետո 20-25օր ընդմիջումներով: Մոնիլիոզների և բորոսապատման դեմ շատ արդյունավետ է **Բոտան 75 Թ. Փ.** պատրաստուկի 0,1-0,15%-ոց (100լ. ջրին 100-150գր) լուծույթով բուժում կատարելը: Լվիճների և բալենու ճանճի առկայության դեպքում (կեռասի պտղալիցի շրջանում) սնկասպան պատրաստուկներին (**Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ;** **Մալլոն –Մ 4/64 Թ. Փ;** **Պրակսիս 70 Թ. Փ.** և այլն) համատեղել **Ագրոֆոս Սուլֆեր 505 խ. է.** պատրաստուկի 0,15%-ոց (100լ. ջրին 150մլ) լուծույթը և կատարել համակցված բուժում:

Կեռասի բերքահավաքից անմիջապես հետո բալենու լորձոտ սղոցողի դեմ սրսկել **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,75%-ոց (100լ. ջրին 75գր) լուծույթով:

### **ԽՆՁՈՐԵՆԻ ԵՎ ՏԱՆՁԵՆԻ**

Գարնանը, մինչև բողբոջների ուռչելը, կալիֆորնիան, հայկական ստորակետանման վահանակրերի դեմ, ինչպես նաև քոսի դեմ կատարել համակցված բուժում համատեղելով **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,15-0,2%-ոց (100լ. ջրին 150-200գր) և **Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,4%-ոց լուծույթները:

Բողբոջների ուռչելու շրջանում քոսի և իսկական ալրացողի դեմ սրսկել **Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթով՝ համատեղելով **Կոլոիդ ծծումբ 80 Թ. Փ.**, կամ **Սուլֆուր 80 Թ. Փ.** պատրաստուկի 0,5%-ոց (100լ. ջրին 500գր) լուծույթի հետ:



Բողոքողների բացման սկզբին իսկական արագողի և քսի դեմ (սնկային հիվանդություններ) սրկել **Ռուբիգան 12 Ն. Է.** պատրաստուկի 0.03%-ոց (100լ. ջրին 30գր) լուծույթով:

Պսակաթերթերը թափվելուց հետո, ապա 12-14 օր անց իսկական արագողի և քսի դեմ սրկել **Սալլոն –Մ 4/64 Թ. Փ.** կամ **Պրակսիս 70 Թ. Փ** պատրաստուկներից որևիցե մեկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթով՝ այն համատեղելով **Օրիսուլ Զ. Դ. Հ.** պատրաստուկի 0,15-0,2%-ոց (100լ. ջրին 150-200գր) լուծույթի հետ:

Քոսով ուժեղ վարակված տնկարկներում ավելի արդյունավետ է պայքարը կազմակերպել **Ռուբիգա 12 Ն. Է.** պատրաստուկով տնկարկը բուժելով 0,05%-ոց (100լ. ջրին 50մլ) լուծույթով:

Պսակաթերթերի թափվելուց անմիջապես հետո արձեռնու կեղծ վահանակրի դեմ սրկել **Ագրո 40 Ն. Է.** կամ **Ագրոֆոս 48 Ն. Է.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200մլ), կամ որ ավելի արդյունավետ է **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,1%-ոց (100լ. ջրին 100գր) լուծույթով այն կրկնելով 10-12օր հետո:

Մինչև ծաղկելը և ապա պսակաթերթերի թափվելուց անմիջապես հետո խնձորենու պտղակերի, գորշ գծավոր երկրաչափի, ոսկետուտի, լեռնային օղակավոր բոժոժագործի, բրդապատ լվիճի դեմ սրկել **Ագրոֆոս Սուպեր 505 Ն. Է.** պատրաստուկի 0,15%-ոց (100լ. ջրին 150մլ) կամ **Սալոս 35 Ն. Է.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200մլ) կամ որ ավելի արդյունավետ է **Պիրիմենթս Սուպեր 402 Ն. Է.** պատրաստուկի 0,07-0,1%-ոց (100լ. ջրին 70-100մլ) լուծույթներից որևէ մեկով: Վերջին պատրաստուկը բացի վերը նշված միջատներից ունի նաև տզասպան հատկություն: Խնձորենու պտղակերի դեմ սրկումները շարունակել պսակաթերթերը թափվելուց 18-20 օր հետո, իսկ հետագա սրկումները կրկնել ևս 1-2 անգամ՝ կախված տրոտի տեսակից 18-22 օր ընդմիջումով:

Խնձորենու կարմիր տիզի, պտղատուների գորշ տիզի, արձեռնու տիզի մասսայական զարգացման ժամանակ սրկել **Դեմիտան 20 Ն. Կ.** պատրաստուկի 0,03-0,07%-ոց (100լ. ջրին 30-70մլ) լուծույթով: Այդ պատրաստուկի 0,07%-ոց (100լ. ջրին 70մլ) լուծույթը ոչնչացնում է նաև տզերի ձվերը:

Աշնանը, տերևաթափի նախօրյակին, քսի և փտումների դեմ սրկել **Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթով:

Ծախսերը փոքրացնելու նպատակով սրկման աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի համընկնի միջատների և սնկային հիվանդությունների պայքարի ժամկետները և կատարել միջատասպան և սնկասպան պատրաստուկների համատեղում մեկ սրկման ժամանակ (համակցված բուժում):

Ցանկալի է պատրաստուկները հերթագայել մեկը մյուսով, որպեսզի բացառվի հարմարվողականության ձեռքբերումը: Չմոռանալ պաշտպանել բուժանյութի սպասման ժամկետները (բերքահավաքից առաջ տվյալ բուժանյութով բուժման թույլատրվող ժամկետը):

Տանձենու համար կատարել նույն սրսկումները բացառությամբ տանձենու սղոցողի դեմ՝ սրսկել պսակաթերթերի 90%-ը թափվելուց հետո **Ազրոր 40 խ. Է.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200մլ) լուծույթով:

Տանձենու պսիլայի դեմ սրսկել ոչ ուշ 5% վարակվածության դեպքում (տերևների լացը) **Պիրինեքս Սուպեր 402 խ. Է.** պատրաստուկի 0,1-0,15%-ոց (100լ. ջրին 100-150մլ) կամ **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,1%-ոց (100լ. ջրին 100գր) լուծույթներից որևէ մեկով, այն կրկնելով 7-10 օր հետո:

Տանձենու տնկարկներում տզերի զանգվածային բազմացման ժամանակ սրսկել **Պիրինեքս Սուպեր 402 խ. Է.** պատրաստուկի 0,1%-ոց (100լ. ջրին 100մլ) լուծույթով, կամ որ ավելի արդյունավետ է՝ (ունի նաև ձվասպան հատկություն) **Դեմիտան 20 խ. Կ.** պատրաստուկի 0,07%-ոց (100լ. ջրին 70մլ) լուծույթով:

Պտղատու ծառերի բուժումների ժամանակ խորհուրդ է տրվում բանվորական հեղուկին (պատրաստի լուծույթին) խառնել բիոլոգիական ակտիվ նյութ և աճման խթանիչ **Լիզնոգումատ կալիումական AM** տեսակը: Այդ նյութի 0,05%-ոց (100լ. ջրին 50գր) լուծույթով սրսկում կատարելիս (վեգետացիայի ընթացքում 3-4 անգամ) մեծանում է բույսի դիմադրողականությունը անբարենպաստ պայմանների նկատմամբ, արագանում է աճի և հասունացման գործընթացը, մեծանում է ազրոքիմիկատի կայողականությունը, և վերջապես նպաստում է բերքատվության և պտղատու ծառերի որակական հատկանիշների բարձրացմանը:

## ԲԱՆՋԱՐ-ԲՈՍՏԱՆԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐ

### Ազրոտեխնիկական միջոցառումներ

Կատարել ճիշտ ցանքաշրջանառություն, որպեսզի կուլտուրան տվյալ դաշտում մշակվի 2 տարուց ոչ ավելի, որպես նախորդ ունենալով բազմամյա խոտաբույսեր կամ հացահատիկային կուլտուրաներ:

Սնկային հիվանդություններից գերօ պահելու համար ցանքից առաջ սերմերը ախտահանել **Ֆունգուրան-ՕՄ 50 Թ. Փ.**, կամ **Պրնձի Օքսիքլորիդ 50 Թ.Փ.** պատրաստուկներից որևէ մեկով՝ սեխ, ձմերուկ, սոխ, վարունգ 5գր՝ 1կգ սերմին; պոմիդոր, տաքդեղ, բադրիջան 8գր՝ 1կգ սերմին ծախսի նորմայով:

Բակտերիալ և վիրուսային հիվանդությունների դեմ պայքարելու նպատակով սերմերը 30 րոպե տևողությամբ ախտահանել **Կալիումի պերմանգանատի** (Մարգանցովկա) 1%-ոց (1լ. ջրին 10գր) լուծույթով, կամ **Կալիումի հիպոքլորիդի** 1%-ոց (1լ. ջրին 10գր) լուծույթով 1-3 րոպ. տևողությամբ, որից հետո հանել և չորացնել: Սերմի ծլողականությունը և ծլման էներգիան մեծացնելու, բույսի աճը արագացնելու և առողջ սածիլներ աճեցնելու համար հեռանկարային է ցանքից առաջ սերմերի մշակումը Հումինային թթուների լուծույթով:

Այդ նպատակով սերմերը 10-12 ժամ տևողությամբ ընկղմում են **Լիզոնոզումատ կալիումական A կամ AM** բիոլոգիական ակտիվ նյութի 0,3-0,5%-ոց (1լ. ջրին 3-5գր) լուծույթի մեջ, որից հետո այն հանել և չորացնել:

Սածիլանոցների հողը ամեն տարի փոխել և ախտահանել ֆորմալինի 5%-ոց լուծույթով 1մ<sup>2</sup> 10լ ծախսման նորմայով: Սածիլանոցների հողախառնուրդը պատրաստել հետևյալ հարաբերությամբ՝ տորֆ-25%; գետի վացած ավազ 25%; հող 50%: Հողախառնուրդը պարարտացնել համակցված պարարտանյութերով (ազոտական, ֆոսֆորական և կալիումական) և Լիզոնոզումատներով: Խուսափել միակողմանի ազոտական (ամոնիակային սիլիտրա) պարարտացումից:

Հողաբնակ վնասատուների դեմ (բվիկներ, ճռիկներ, արջուկ սովորական, հացագնայուկ, լարաթրթուռ, մայիսյան բզեզ, չրխկան բզեզ, սոխի ճանձ) պայքարելու համար հող մցնել **Ագրոֆոս 5 Հ** պատրաստուկը հետևյալ ծախսի նորմերով. 10կգ/հա՝ ցանքի ու սածիլման ժամանակ, 25կգ/հա՝ կուլտիվացիայի ժամանակ: Չրխկան բզեզների և սոխի ճանձի համար հող մցնել նույն պատրաստուկը 50-60կգ/հա ծախսի նորմայով:

Պտղատու ծառերի բուժումների ժամանակ խորհուրդ է տրվում բանվորական հեղուկին (պատրաստի լուծույթին) խառնել բիոլոգիական ակտիվ նյութ և աճման խթանիչ **Լիզոնոզումատ կալիումական AM** տեսակը: Այդ նյութի 0,05%-ոց (100լ. ջրին 50գր) լուծույթով սրսկում կատարելիս (վեգետացիայի ընթացքում 3-4 անգամ) մեծանում է բույսի դիմադրողականությունը անբարենպաստ պայմանների նկատմամբ արագանում է աճի և հասունացման գործընթացը, մեծանում է ազրոքիմիկատի կայողականությունը, և վերջապես նպաստում է բերքատվության և պտղատու ծառերի որակական հատկանիշների բարձրացմանը:

Կատարել հիվանդ և վնասված սածիլների հողաբնով հեռացում: Ջրման ժամանակ խուսափել ջրի կուտակումներից, բույսի արմատավզիկի հետ շփումից: Այդ նպատակով ջրատար ակոսները պատրաստել կարճ և խորը:

Կատարել խորը բուկլից, հաճախակի փխրեցնելով միջշարքային և միջբուսային տարածությունները՝ ոչնչացնելով մոլախոտերը: Պոմիդորի

ցանքատարածություններով պտուղների հասունացման շրջանում կատարել հաճախակի և հավասարաչափ ջրումներ (զագաթնային փտման դեմ):

Մերմացան վերցնել միայն առողջ բույսերից: Աշնանը հավաքել, դաշտից դուրս տանել բուսական մնացորդները և այրել: Կատարել խորը ցրտահերկ: Օրգանական պարարտանյութերը (գոմաղբ և այլն) հող մտցնել աշնանը՝ արդեն քայքայված վիճակում:

## **ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

### **վարունգ, ձմերուկ, սեխ, բիբար, պոմիդոր, բադրիջան**

Սովորական արջուկի, հողաբնակ, բվիկների, ճռիկների դեմ պայքարել **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկով պատրաստված գրավչանյութով (համակցված կերի հետ խառնուրդ), որը պետք է պատրաստել 1:40 հարաբերությամբ (25գր պատրաստուկին ավենացնել 250 – 350 մլ ջուր և հավասարապես խառնել 1 կգ համակցված կերի հետ), ծախսելով 1000 քառ. մին 1,5-3կգ գրավչանյութ: Պատրաստված գրավչանյութը պետք է հողին ցրել ցանքատարացքը ջրելուց հետո՝ երեկոյան ժամերին:

Միայն հողաբնակ բվիկների դեպքում հողի մակերեսը սրսկել **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթով՝ ծխսելով 1000 քառ մ.- ին 60լ աշխատանքային հեղուկ:

Կարադրինայի և սեխի ճանձի դեմ սրսկել **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,1%-ոց (100լ. ջրին 100գր) կամ **Պիրինեքս Սուպեր 402 Խ.Է.** պատրաստուկի 0,08-0,1%-ոց (100լ. ջրին 80-100մլ) լուծույթից որևէ մեկով՝ ծախսելով 1հա - ին 500- 600լ. աշխատանքային հեղուկ:

Իսկական ալրացողի և տերևային բծավորությունների (սնկային հիվանդություն) դեմ սրսկել **Օրիսուլ Ջ. Դ. Հ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) կամ որ ավելի արդյունավետ է **Ռուբիզան 12 Խ. Է.** պատրաստուկի 0,05%-ոց (100լ. ջրին 50մլ) լուծույթներից որևէ մեկով 15-20 օր ընդմիջումներով 1 հա -ին ծախսելով 500-600լ աշխատանքային հեղուկ: Փտումների դեմ (մոխրագույն փտում, սպիտակ փտում, արմատային փտումների, սև ոտիկի) շատ արդյունավետ է **Բոտրան 75 Թ. Փ.** պատրաստուկի 0,1-0,15%-ոց (100լ. ջրին 100-150գր) լուծույթով բուժումը: Արմատային փտումների դեպքում կարելի է նաև հողը ջրել պատրաստուկի 0,07-0,1%-ոց (100լ. ջրին 70-100գր) լուծույթով:

Կեղծ ալրացողի (սնկային հիվանդություն) դեմ սրսկել **Ֆունգուրան-ՕՄ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0.2%-ոց (100լ. ջրին 200գր) կամ **Մալլոն-Մ 4/64 Թ. Փ.** պատրաստուկի 0.2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթներից որևէ մեկով: Շատ ավելի արդյունավետ է **Սֆինքս էքստրա Ջ. Դ. Հ.** պատրաստուկի 0,15%-ոց լուծույթով (100լ. ջրին 150գր) պայքարի կազմակերպումը:

Արսկումները կրկնել 15-20 օր ընդմիջումներով, իսկ հաճախակի անձրևների ժամանակ արսկումների հաճախականությունները ավելացնել: Սնկային հիվանդությունների դեմ արսկումները կատարել նախագոյալական ձևով հերթագայելով վերը նշված բաժանյութերը:

Սովորական ոստայնատիզի դեմ արսկել **Դեմիտան 20 Ն. Կ.** պատրաստուկի 0,03-0,07%-ոց (100լ ջրին 30-70մլ) լուծույթով: Այդ պատրաստուկի 0,07%-ոց լուծույթով արսկումը ոչնչացնում է նաև տզերի ձվերին:

Լվիճների, տրիպաների, մլակների, ջերմատնային սպիտակաթևիկի դեմ արսկել **Ագրոֆոս Սուպեր 505 Ն. Է.** պատրաստուկի 0,15%-ոց (100լ ջրին 50մլ) ջրային լուծույթով: Շատ արդյունավետ է նաև **Պիրինեքս Սուպեր 402 Ն. Է.** պատրաստուկը, որի 0,08-0,1%-ոց լուծույթով (100լ ջրին 80-100մլ) բուժումը, միաժամանակ պայքարում է տզերի, ջերմատնային սպիտակաթևիկի, մորմազգիների ականողի, որդերի, թրթուրների և Լվիճների դեմ:

Ծախսերը փոքրացնելու նպատակով աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի համընկնի միջատների և սնկային հիվանդությունների պայքարի ժամկետները և կատարել համակցված բուժում: Հիվանդությունների և վնասատուների հարմարողականությունից խուսափելու համար կատարել վերը նշված բուժանյութերի հերթագայում: Խստորեն պաշտպանել բաժանյութորի սպասման ժամկետները (թերքահավաքից առաջ տվյալ բուժանյութով բուժման թույլատրելի ժամկետը):

## Սոխ

Սոխի արմատավզիկի փտման դեմ սերմերը աղտահանել **Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ.** պատրաստուկի 10 կգ սերմին ծախսելով 50 գր ախտահանիչ:

Բույսի 10-20սմ բարձրության շրջանում սոխի կեղծ ալրացողի (սնկային հիվանդության)դեմ արսկել **Ֆունգուրան- ՕՄ 50 Թ. Փ.** կամ **Սալլոն –Մ 4/64**, կամ **Պրաքսիս 70 Թ. Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) ջրային լուծույթներից որևէ մեկով: Ուժեղ վարակի դեպքում (սոխի ծայրերի սպիտակեցում) ավելի արդյունավետ է **Սֆինքս Էքստրա Զ. Դ. Հ.** պատրաստուկի 0,15%-ոց (100լ. ջրին 150գր) լուծույթով բուժումը՝ 1հա-ին ծախսելով 300-400լ աշխատանքային հեղուկ: Արմատային փտումների և լորձոտության դեպքում շատ արդյունավետ է **Բոտրան 75Թ.Փ.** պատրաստուկի 0,15%-ոց (100լ. ջրին 150գր) ջրային լուծույթով բուժումը (կարելի է նաև ջրել պատրաստուկի 0,1%-ոց (100լ. ջրին 100գր) լուծույթով: Այդ նույն ժամանակ տրիպսի և սոխի պսիլլայի դեմ արսկել **Ագրո 40 Ն. Է.**

պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200մլ) կամ **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,1%-ոց (100լ.ջրին 100գր) կամ **Պիրիմեքս Սուպեր 402 Խ.Է.** պատրաստուկի 0,08%-ոց (100լ. ջրին 80մլ) լուծույթներից որևէ մեկով: Անհրաժեշտության դեպքում այդ սրսկումները կրկնել 10-15օր հետո և օգոստոսի սկզբներին:

### Կաղամբ

Սածիլանոցների հողախառնուրդը հաճախակի փոխել կամ ախտահանել **Ֆորմալինի** 5%-ոց (100լ. ջրին 5կգ) լուծույթով 1մ<sup>2</sup> մակերեսին ծախսելով 10լ. բանվորական լուծույթ:

Ցանքից հետո բույսի 3-րդ իսկական տերևի առաջնաալուց կաղամբի սև ոտիկի, կիլայի, բակտերիոզների և փտումների դեմ որպես նախազգուշական միջոցառում բուժել **Սալլոն –Ս 4/64** պատրաստուկի 0,2-0,25%-ոց (100լ. ջրին 200-250գր) լուծույթով: Ուժեղ վարակի դեպքում արդյունավետ է **Բոտրան 75 Թ. Փ.** պատրաստուկի 0,15%-ոց (100լ. ջրին 150գր) լուծույթով բուժումը (կարելի է նաև հողը ջրել պատրաստուկի 0,07-0,1%-ոց (100լ. ջրին 70-100գր) լուծույթով):

Սածիլման ժամանակ խոտանել վարակված և մեխանիկական վնասվածքներով սածիլները: Սածիլումից մեկ շաբաթ անց կաղամբաճանձի դեմ սածիլները ջրել **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,05-0,07%-ոց (100լ. ջրին 50-70գր) լուծույթով՝ յուրաքանչյուր բույսին 0,1լ ծախսի նորմայով: Սածիլումից 10-15օր հետո սնկային հիվանդությունների դեմ սրսկել **Ֆունգուրան- ՕԻ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթով՝ 1հա-ին 500-600լ ծախսի նորմայով: Կաղամբի գլուխների ձևավորվելու սկզբնական շրջանում իպսիլիոն բվիկի, կաղամբի բվիկի, կաղամբի ցեցի, կաղամբի ձերմակաթիթեռի, վլիճների և վլիկների դեմ սրսկել **Ագրոֆոս Սուպեր 505 Խ. Է.** պատրաստուկի 0,15-0,2%-ոց (100լ. ջրին 150-200մլ) կամ **Իմիդան 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,075-0,1%-ոց (100լ. ջրին 70-100գր) կամ **Պիրիմեքս Սուպեր 402 Խ. Է.** պատրաստուկի 0,05-0,8%-ոց (100լ. ջրին 50-80մլ) լուծույթներից որևէ մեկով: Անհրաժեշտության դեպքում սրսկումները կրկնել 15-20օր հետո: Բերքահավաքի ժամանակ կաղամբի հիվանդ և վնասված գլուխները առանձին հավաքել և հեռացնել: Պաշտում մնացած կոթունները հավաքել, չորացնել և այրել:

### Կարտոֆիլ

Կիրառել ցանքաշրջանառություն այն հաշվով,որ կարտոֆիլը նույն դաշտում ցանվի առնվազն 4 տարի անց և հաջորդի հացահատիկներին կամ ընդեղեններին: Սերմացու պալարները ստանալ բարձրադիր (ծովի մակերևույթից 1500մ) վայրերից, հիվանդ և վնասված պալարները չօգտագործել սերմացուի տակ: Պալարները ցանքից մեկ ամիս առաջ 14

ծլեցնել լուսավոր տեղում, մինչև ծիլերը լինեն 0.5 –1սմ և վնասված ծիլերով պալարները խոտանել: Ցանքի օրը պալարները պատահանել **Պրեստիժ** կամ **Բոտրան 75 Թ. Փ.** պատրաստուկներից որևէ մեկով : Ցանքը կատարել, երբ տնկման խորությունում հողի ջերմաստիճանը հասնում է 7-8C-ի: Կարտոֆիլի բույսերը 15-20սմ բարձրության հասնելիս ֆիտոֆտորայի (սնկային հիվանդության ) դեմ սրսկել **Ֆունգուրան-ՕՄ 50 Թ. Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) կամ **Մալլոն-Մ 4/64 Թ. Փ.** պատրաստուկի 0,2%-ոց (100լ. ջրին 200գր) լուծույթով:

Լարաթրթուրով (ծակող որդ) և արջուկով (բոյբոյ) ուժեղ վարակված դաշտերում ցանքի ժամանակ պալարների հետ միասին հող մցնել **Ագրոֆոս 5G** պատրաստուկի հատիկները 15կգ/հա (1հա-ին 15կգ) ծախսի նորմայով: Այն կարելի է կրկնել կուլտիվացիաների ժամանակ 25-30 կգ/հա ծախսի նորմայով: Միայն սովորական արջուկով վարակված դաշտերում կարելի է հողի մակերեսին հավասարաչափ շաղ տալ **Իմիդան 50 WP** պատրաստուկի 1:40 հարաբերությամբ պատրաստված գրավչանյութ (25գր պատրաստուկին ավելացնել 300-350մլ ջուր և խառնել 1կգ համակցված կերի հետ, ծախսելով 1հա-ին 15-30կգ արդեն պատրաստի գրավչանյութ):

Պատրաստված գրավչանյութը պետք է հողին շաղ տալ ջրելուց հետո երեկոյան ժամերին:

Մայիս-հունիս ամիսներին կուլտրադյան բզեզի (ժուկ) առաջին սերնդի փոքրահասակ թրթուրների և ձմեռած բզեզների դեմ սրսկել **Իմիդան 50 Թ.Փ.** պատրաստուկի 0,07-0,1%-ոց (100լ. ջրին 70-100գր) լուծույթով: Հաջորդ սրսկումները կատարել երբ վարակված բույսերի քանակը գերազանցում է 10%-ին (10բույսից 1-ը վարակված է):

